


16381



188

948 "Մշակե

891.99
Տ-35

ՀԱՆԱԽԵՑԻ

ՀԱԿԱԽԵՑԻ ԾԱՌԱՋՈՒՅՔԻ ԱՐԴՅՈՒՆՎԱՐԻ

19 դեկտեմբերի 1899 թ.

ԱԿՇՈՒԵՍԻ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Թ. Ի. Փ. Լ. Ի. Ս.
Արագ. տպար. Մ. Մարտիրոսյանց
1900

Բ 20 03

891.99
2 - 35

ԱՐ

ՀԱԽԱԽԵՑԻ



19 դեկտեմբերի 1899 թ.

ԱԿԱԴԵՄԻԱ ՏՊԱԿԱՆԻ ԹԻՖԼԻՍԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԼԻՔԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԹԻՖԼԻՍԻ

ԹԻՖԼԻՍ

Արտ. տպար. Մ. Մարտիրոսյանցի
1900

3631

№ 1048

ԵՐԻՑ

ՄԵՐԱՅՐԴՈՅ ՏՐԿԻ

ՆԱՏԱԼԻԱ ՍԵԼԻՎԱՆՈՎՆԱ

ԶԻՍԵՐՄԱՆԻՆ

ԶԱԿԱՆԵՑՈՒՅ

մասն զնում ենքու զայտք առնելու ոյն
պահը մշակվեց որ զայտք չպահող ոչ
խաղաց զնում մարտածու ոչ առանձու ինչ
ուրի անթափակայի մի զնումներուն նույգուրու
ու առաջ ձևաց շատու ու առաջ ու ու

Մնծայարգոյ Ճիկիճ

„И вспомнилъ-ли, что это слово
„братья“

„Всѣхъ словъ земныхъ дороже и
святѣй...“

ԽոյակօԵ.

Կինը զգացմունքների շտեմարան է: Էլ ին-
չով կարող էր մի կին արտայայտել իր քնա-
տուր զգացմունքներից ամենավսեմը, ամենա-
պաշտելին՝ եղբայրական սէրը, քան թշուառին
կարեկցելով ու լացողին արցունքը սըբելով:

Դուք մեր զաւառը ոտք դրած օրից ցոյց
տուիք իդէալական կնոջ կենդանի պատկերը,
որի առաջ դեռ շատ տարիներ ծունկ խոնար-
հած, երախտապարտ արցունքն աշերին պիտի
երկրպագեն հարիւրաւոր որքեր ու թշուառներ:

Դեկտեմբերի 19-ի (1899 թ.) սարսափելի
աղէտը, որ մի ակնթարթում կործանեց զաւա-

ոիս տասնեակ գիւղեր, առիթ տուեց բանալու Զեր կանացի քնքոյց սիրտը, ուր հրեղէն տառեռով դրօշմուած էր անձնական մանր կըքերով տոգորուած մարդկութեանը մի խրատական դաս՝ „Կո этո слово „братья“ всюхъ словъ зем-
ныхъ доро же и святыи...“

Ու դուք, հետեւելով այդ երկնային նշանա-
բանին, ոչ մի ջանք ու ծիգ չինայեցիք սոսկալի
աղէտի բիւրաւոր զոհերին սփոփելու ու դար-
մանելու:

Ուստի, Մեծայարգոյ Տիկին, սոյն փոքրիկ
աշխատութիւնը, որ պարունակում է Ախալքալա-
կի երկրաշարժի համառու նկարագիրը, պարտք
է համարում նուիրել Զեր անուանը

ՃԱՀԱՅ

ՃԱՀԱՅՆԵՑԻՆ

Ա.

Զմեռ էր: Զաւախիքի ձիւնոտ ձմեռը: Սար ու ձոր սիպ-
տակ սաւանի տակ խուռակիել իրար գիրկ էին մտել: Դաշտ
ու գետ խաղաղել, լոել էին: Միայն կատաղի քամին տխուր
գուժկանի պէս ամեն բովէ բաղսում է գուռ ու երթիկ ու
ճանկուելով գեանի սառած ձիւնը, խփում պատահող ան-
ցուրդի քիթ ու բերանին: Բայց գիւղացու հոգը չէ. գարուն
ու ամառ, աշնանից մինչի ձմեռ արիւն քրտինք թափելով
նա տեսել է իր աղքատիկ «թաղաւիկը» (պաշարը)՝ մի քա-
նի սոմառ գարի, մի մարտագ էրթ, ու այժմ իր մանը ու
խոչորով, մալ ու ոչխարով փակվել տաք գոմում, «կշտին»
ընկել իր եղների հետ ծամում է ու միայն ծամում:

Քաղաքի աղքատ ու հարուստ խանութպաններն են
միայն, որ այդ ցրտին ու թիփուն հաստ «պալտօները» հա-
գած, առաւօտանից մինչ իրիկուն սընկ-սընկալով մի բո-
րիկ մուշտարու են սպասում, որ իրար ձեռքից գըզգըզեն
«պոպկեն» վեր վարեն, բայց այդ էլ Աստուած տաք, հազա-
րից մին չի պատահում:

Կիրակի էր. գեկտեմբերի 19-ը, մի տարօրինակ կի-
րակի: Կարծես այդ օրը մայիսւայ օրերից յետ էր մնացել
ու խառնվել զեկտեմբերին: Արևն իր ցուցուն ճառադայթ-
ներով պար էր բռնել կչկան աղքիւրի սառած քուաների
հետ ու նրանց հետ համբուրգելով մարգարտի հատիկներ
էր թափում: Սար ու ձոր այդ օրը հարուստ հարսնեորի
պէս սիպտակ պսպղոն ատլաս էին հագել: Եւ յիրաւի,
հարսանիքներից խեղճ գիւղացիք աշքերը չէին կարողանում
բանալ: Նիշան ու քիրիշան, հարսնիք ու հարսնտես ախը-
«նախըթողին» են լինում (գեկտեմբերին):

Կէս օր է: Զուռնի զըլզըլոցից ու դաւուլի զըմբգըմ-
բոցից օդն է թնդում: Զարսը զուրս պիտի համեն: Դուռ
ու երթիք բռնել են ալ ու խաշ-խաշ հարսներն ու աղջկ-
ները: Նոցա շուրջը փայտէ ձիերով «սուտ մաղաբ» են խա-

զում մանուկները, իսկ դէմ ու դէմ շարուած ջահիլներից ամեն մինն աշքի տակով գաղտում որոնում է իր ընտրեալին իր «եարին»: Ահա և մաղրորը: Հարեան գիւղի ձիւոր ջահիլները «գրմանաւոր» (նոր) շորերով զուգված, մի մի հաստ «ջիլթ» էլ ձեռներին, իրանց ճարպիկութիւններով աշխատում են գերազանցել տեղի երիտասարդներին: Բայց հարսը ուշանում է. մի խումբ աղջիկներ արգելել են հարսին ու յամառութեամբ պահանջում են խաչեղբօրից իրենց ածաղկոց համին»:

Մի որիշ տեղ «ծաղկոցները» նորահարսի հետ իրանց ունեցած-չունեցած արդ ու զարդով, շատերն էլ ուրիշից «փոխ» առած, պահապահ, զարդարված, անուշ ձէները ձգել մէանիներով պար են խաղում: Նրանց «մաղարը» գեղին մէջ է ու գեռ իրիկաց դէմ պիտի գայ:

Քաղաքն էլ այդ օրը կալծես հանդիսաւոր տեսք էր առել: Մերկ ու անծառ փողոցը լիքն է զրօնողներով: Կարմիր արեի քաղցր հայեացքից սիրտ առած ծեր ու մանուկ գուրս էին եկել մքայած կողերն արեին տալու: Խանութները փակ են. միայն մկիտանները, որ թուով գրեթէ միւս բոլոր խանութների կիսի շափ են, վիտում են ամեն հասակի ու դասի այցելուներով: Ժամի երկումն է. անխոնջ տանտիկինն առանձին խնամքով պատրաստել է այդ օրուայ ճաշն ու անհամբեր սպասում է ամուսնուն, որ շաբաթուայ մէջ գէթ մի օր իր սիրասուն բալիկների ու մտերիմների հետ սեղան նստի: Բայց ոչ ամուսինն է գալիս, ոչ էլ բալիկները: Առաջինը մկիտանում իր «եայան-եօլտաշների» հետ «խմում է». իսկ անմեղ մանկիկները որ դնացել են հարեան հօրը տուն բերելու մկիտանի մի անկիւնում կուչ եկած սպասում են նրան ու իրանց հարազատ հօր «քարի» օրինակով կրթվում, դաստիարակվում:

Յանկարծ մի խուլ ամպի որոտի պէս գոռոց սթափեցրեց ամենին: Ջըրախկ ու շըրումկ թափվեցին ինսամքով շարված շիշերն ու ջարդ ու փշուր եղան: Բոլորը սարսափած անգիտակցարար դուրս դուան: Մի վարկեան Ա-

խալքալաքը պղնձէ քաղաքի պէս քարացել էր: Խարխուլ տներից բարձրացող թեթև փոշին սև վարագուրի պէս կանգնել էր քաղաքի վրա: Բայց խկոյն անցաւ ալշութիւնն ու փողոցներում վաղվըզողների վայնասունն ու լացը խլացրեց օդը: Զագը կորցրած վագրի պէս մոնչալով ամենքը վազում էին տուն:

—Փառք Ասսու բան չկայ... մի սրապուխ հառաչի հետ գուրս էր թոշում տուն համոզի բերանից:

Այն, բան չկար. քաղաքը մարդկային զոհեր շտուց բայց բոլորի սիրտն արիւն էր կտրել ու ինչ որ մի վատ նախազգացում պաշարել էր ամենին: Փողոցներում վիտում է ամբախը: Կին ու տղամարդ. ծեր ու մանուկ, սարսափած բնութեան բոպէական ահռելի խաղից չէին համարձակվում ոտք դնել սեփական տան «անհիւրընկալ» շեմը:

Մթնում է: Արևն է միայն, որ անշեղ շաբունակում է իր ուղին. նրա հոգը չէ մարդոց վայնասունն ու լացը: Տխուր զողանջում է եկեղեցու կոչնակը: Փողովուրդը խումբ խումբ խունփում է Աստուծոյ տաճարը: Լուռ աղօթում են: Հեղեղի պէս հոսում է յորդ արցունքը յուսահատ աղօթունքների աշերից: Դուցէ երբէք այդքան սրտաբուխ արցունք չէր թափել Աստուծոյ տաճարում, որքան այդ օրհասական երեկոյին թափեց: Բայց երկինքը շըգիջնց... Ժողովուրդը մի փոքր հանգստացած սրտով նոր դուրս էր զալիս եկեղեցուց, երբ յանկարծ երկրի մի նոր ցնցում սարսափեցրեց ամենին: Ժամի 9-ին կրկնվեց ցնցումն ու ոտքերիս տակի միակ հաստատուն կարծված կայանն՝ երկիրը, էլ շդագարեց օրօրվելուց:

Մութն է: Ցերեկուայ բաց կապուտակ երկինքն էլ լալկան տղի պէս քիթ-մոռութ կախել. յոնքերը կիտել է: Սստոյ ու լուսին երկիւղից կուչ եկել զաս-զաթ են եղել մութ ամպի վերմակի տակ: Մանը մաղում է անձրել: Ցիրաւի այդ օրը տարուայ օրերի մէջ մի բացառիկ տարօրինակ օր էր Ախալքալաքի համար ու չաեսածներս կարծես այդ օրը պիտի տեսնէինք: Փողոցները լիքն են հարբած ու զգաստ

ըմջողներսվ։ Ոչ ոք սիրտ չէր անում մտնել տան անհաստատ յարկի տակ, ուր մնացողներն էլ խմում են ու ոգելից խմիչքով աշխատում օրուայ սարսափը մոռանալ։ Բաքոսն այդ երեկոյ ազատ տարածել էր թերեն Ախալքալակի վրա։ Ոմանք սարսափից ու երկիւղից էին խմում, ոմանք էլ ուրախութիւնից որ երկնային պատուհասից անվտանգ ազատվել են։

Կէս գիշեր է, գարնան գիշերուան պէս տաք գիշեր։ Սսող ու լուսին կորել էին հաստ ամպի տակ։ Քաղաքի մի ջուխտ ու կենտ լապտելները հանգչող խարոյկի վերջին կայծերի պէս պէծ-պէծին են տալիս ու աւելի մթնեցնում անցորդի ցեխոտ ուղին։ Գիշերուան այդ պահուն դեռ ոչ ոքի տան կրակը չէր մարել ու ոչ մէկի գլուխը բարձին չէր եկել։ Եւ ո՞ր աղամորդին սիրտ կանի այդ անկանոն տարուբերվող ցնցվող «մեծ օրօրոցին» մէջ քնելու։ Ժամի ճշշտամներկուախն խիստ թափով դարձեալ ցնցվեց «մեծ օրօրոցը»։ Կարծես խոժոռ ծծմայրը դայրացած լալկան «երեխաների», անզնութիւնից իր հուժկու բազկի մի հարուածով ուզում էր տապալել «օրօրոցն» էլ «մանկիկներին» էլ։ Սակայն այդ հարուածներն էլ առաջուան պէս չին ահարեկում վախկոտ «մանկիկներին»։ Մի բոպէ միայն լսվում էր բաց դաներից հարս-աղջիկների յուսահատ ճիշը, պառաւների մրմնջող՝ աղօթքը, տղամարդկանց սրտապնդող յորդորանքն ու ապա ամեն ինչ լուսում, վերջանում։ Գուրսը թափառողները մերթ ընդ մերթ հանդիպում են տուն ու դարձեալ շըջում։

Մութ փողոցով վազում է մէկը։ Դա սովորական շըջողներից չէր։ Գլխաբաց, ոտներն առանց ոտնամանի, ամեն ճիգ թափում էր որքան կարելի է ժամ առաջ համենել... բայց երկի ինքն էլ չգիտէր ուր։ Մենք կանգնեցրինք նրան։

— Ո՞րտեղից ես, բարեկամ, ո՞ւր էս վախտիս։

— Ասսու սիրուն, իլլաճը... (ի սէր Աստուծոյ, մի ճար) աներս աւրաւ. տղով, օղլուշազով (կանանցով), հողին տակը մնացինք...

— Ո՞ր գեղէն ես, բարեկամ։

— Վէր (ոս) գեղը կը հարցնես..., Մերենիա, Բալխօ, Բուղաշէն, Տրկնա, Սամսարնին, Էխտիլա, վարի (նեղքելի) գեղանը բիրադի (բոլորը) աւրան... քար ու քանդ էղան... իլլաճը էրէք Ասսու սիրուն...»

«Գիշանը քարուքանդ եղան... տներս աւրաւ., իլլաճը էրէք...» հեկեկալով կանչում էր բնութեան ահուելի հարուածի առաջին գումանը։ Բոլորս քարացանք։ Ի՞նչ կարող էինք անել ուրիշի համար, երբ նոյն սոսկալի ճակատագրին սպասում էինք և մինք։ Առաջնորդեցինք գաւառապետի տունը։ Գիշերը մինչ ի լոյս հեռազիր հեռագրի յետկից տեղացին Թիֆլիզ։

Առաւօս գեռ մութն ու լուսուն տեղային գօրքի նաւագինեան գունդը գաւառապետի առաջնորդութեամբ ճանապարհ ընկաւ աղէտի տեղը սկզբնական օգնութիւն հասցնելու։ Սոսկալի աղէտի լուզը մի ակնթարթում տարածուեց ամբողջ քաղաքում։ Մէկը միւսի յետերց կարծես ակամայ բացվում հն խանութները։ Բայց ոչ ոք չի ուզում ներս մտնել։ Տխուր խանութպանները խումբ խումբ հաւաքուած խանութների առաջ լուս քշփշում են։ Բոլորի խօսակցութեան առարկան աղէտն է, որի մասին խրաքանչիւր ժամ ստացող կցկառւր տեղեկութիւնները բերնէ բերան անցնելով սոսկալի աղէտն աւելի ես ահուելի գոյներով էին նկարագրում։ Փողոցում ոչ անցնող կայ ոչ մնացող։ Կեանքը կարծես ուզում էր դադարել ու ամեն ոք մահն աշքով տեսածի պէս երկիւղից ապշել, քարացել էր։ Սակայն երկը մերթ ընդ մերթ կրկնօգ ցնցումը յիշեցընում էր մարդոց կեանքի քաղցրութիւնն ու իսկոյն ապշութիւնից սթափուած վազում էին տուն իրանց սիրելիների, մտերիմների մօտ, որ եթէ վիճակված է վերջապէս մեռնել, գէթ միասին մեռնին։ Բայց փողոցի ծայրից հանգիստ ու խաղաղ ահա գալիս է մէկը։ Սև շըջազգեստի փեշերը վեր ժողված, նա իր սէգ քայլերն ուղղում է մի խանութից դէպի միւսը։ Նրա գէմքին չէ նկատվում ընդհանուրին պա-

շարադ ապշութիւնն ու վհատութիւնը: Մե քողի տակից վառվող ջուխտակ կրակոտ աշերը, որ կարծես դեռ արցունքոտ էին, շեշտակի նետերով լուռ յանդիմանում էին փորձանքի առաջ գլխիկոր խոնարհվող երկչուներին ու սիրտ տալիս սրտաբեկ ամբոխին: Փոքրիկ տետրը ձեռին նա անցաւ «չարսուի» բոլոր խանութները, ցեխոտ փողոցներով շրջեց դռնէ դուռ քաղաքի բոլոր դռներն ու բարձրացաւ «շտաբը», զօքերի ու սպաների բնակավայրը: Նա բաղնում էր պատահող դուռն ու ինչ որ ձեռի տետրի մէջ արձանագրելով անցնում հետևեալ դուռը: Նա անտես չառաւ և զինուորների երկար ու մուայլ բնակարանները: Մէկիկ մէկիկ անցաւ բոլորի շիմն ու շատ պանդուխտ, չուառ զինուորների ազգեր արձանագրվեցին այդ լոիկ շրջող ուրուականի յուշտաեւրում:

Բայց ովկ էր այդ տարօրինակ կինը: Միթէ դա ընտանիք, տուն-տեղ չունէր, որ այդ չտրաբաստիկ օրը, մոռացած իր բարեկամներին, իր սիրելիներին, թողած կանացի քնքութիւնն ու թուլութիւնը, դռնէ դուռ էր ընկել:

Դա տիկին Զիսերմանն էր: Մի կին, որի տունն ու տեղը լայն ու անծայր աշխարհն է, իսկ բալիկներն ու սիրելիները բոլոր թշուառներն ու տառապեալները: Ախալքալաքի համար այդ տիրահնոշակ օրը, երբ ամեն մարդ մտածում էր լոկ իր սեփական կաշու մասին, նա ամեն ինչ մոռացած, այն ցուրտ ու ցեխին դռնէ դուռ ընկած նպաստ էր հաւաքում՝ ալիւր, փող, գուլբա, շոր, թշուառ անտուն անտէր զոների համար: Մի քանի օր յետոյ դուք նոյն տիկնոջը կը տեսնէիք հիւանդանոցում ջարդված ու փշրված վիրաւորների վէքերը կապելիս, թաց աչքերով փոքրիկ անտիրական որբերին սփոփելիս, գուրգուրելիս:

Ու կարծես նրա այդ կրակոտ թաց աչքերը դառն արցունքի միջից արտացոլում էին քնքոյշ սրտի վեհ նշանաբան՝ «Ընդ աստեղօք զինչ կայ սիրուն քան զանձկալի եղբայր անուն»:

Աւերգած գիւղերի գժբաղդ զոհերին տեղափոխում են Ախալքալաքի ժամանակաւոր հիւանդանոցը: Աղէտի զոհերի թւումն էր նաև թէժանօ գիւղի Տէր-Գալուստ քահանան, որից իրեկ ծանօթի հարցը՝ «Ցիրաւիք, տէրտէր, ձեր գիւղերը բոլորովին աւերգած են»: Հսկայ տէրտէրը, որի երեսից առաջ ժպիտը վայր շէր ընկնում, այժմ կուչ եկել կենդանի մեռել էր դարձել: Չորցած աշերն անթարթ երեսիս յառեց ու մինչեռ ուզում էր բերանը բանալ. յան կարծ արցունքի յորդ հեղեղն ու հեծկլատանքը խեղեցին նրա ձայնը: «Անիի աւերակները կուզէիք տեսնիլ, վարժապետ ջան, Անին մօտեցաւ.. Ե՞հ, իմ պատմելովս ինչ պիտի հասկնաս, գնա աշբովդ տես, որ զգաս»:

Կէս օր էր երբ դուրս եկալ Զաւախրի նոր Անին տեսնելու: Բնութիւնը կարծես խալաղել էր. ձմեռուայ արևն իր թոյլ ճառագայթներով պսպղեցնում էր ձիւնի սպիտակ սաւանը, որի վրայով թեթև մակոյկի պէս սողում էր սահնակս: Արագովայի ճանապարհը, որ տեղով պիտի անցնէի, անսովոր կինդանութեան մէջ էր: Անցուդարձ անողներին թիւ չկար:

— Որտեղից ես, բարեկամ:— Մերենցից:— Ո՞ւր կերթաս:— Ես ա չխախմ, տիրացու, հոգիս աղատելու. տնով, օղլուշաղով երկ օրէ անօթի մեռանք...— Ե՞նչպէս եղաւ երկրաշարժը ձեր գիւղում. շատ վնասվեցիք:

— Օ՛ֆ, մի հարցնել. ինչս մնաց որ վնասնիս կը հարցընես: Ունեցած չունեցածէս դուս հինգ ջանս հողին տակը սաղ-սաղ թաղեցի էլել եմ կերթամ մեկալոնքա (միւթեները) հէշ խարար շեմ ուր են ուր շեն:

— Էկ ինչպէս եղաւ որ:— Մեր տունը պար էր. Զէյրանենց հարսնցուն ու

ծաղկոցնին (հարսնցուի ընկերուհիները) իննը հատ ծաղկի պէս աղջըկներ գոմին էրեսը (ներքեալ մասում) անուշ ձէները ձգել պար կը խաղային: Բիրդան (յանկարծ) աղջըկնուն զիլ ձէնը գիտես թէ խեղդաւ. ամպի գոռոցի պէս եկող գոռոցըմ ջանս գողացուց. վարն աղջըկնուն մէջ վայնասունըմ ընկաւ, խելքս պտտաւ ու մէմա ան տեսայ, որ գիտես թէ գետինն ոտվնուս տկէն թռաւ. խելքս զլխէս թռուցի, էլ չիմացայ թէ ինչ էղայ. լուս աշխարհքս մթնաւ: Էքսի (միւս) օրը իրիկվան անջաղ ինձի կիսամնու հանեցին ձեռք ձեռքի բռնած պար խաղող մեռած ծաղկի «ծաղկոցնուն» հետ:

Արցոնքի հեղեղը խեղդեց գերեզմանից գուրս եկած կենդանի մեռելի խոպոտ ձայնը: Նա առանց կանգ առնելու, կոշա չուխի փէշով աշքերը սրբելավ շարունակեց ճանապարհը: Քչեց կառապանս. ես նոր զդացի որ իմ այտելս էլ թաց էին:

Կին ու տղայ, ծեր ու մանուկ բռնել էին ամբողջ ճանապարհը: Ցնցոտիների մէջ փաթաթած երեխան մօր շալակին հանգիստ ննջում էր. միւսը մօր փէշից քաշ ընկած աղերսում էր՝ «մարի ջան անօթի եմ, մարի». նրանց յետից դանդաղ, կարծես յակամայից զնում էր մի ծերուկ՝ բռնած ուժասպառ հարսի ձեռից:

Դեռ նոր էի մօտեցել, երբ ծերը գլուխը բացեց ու դողդոջուն ձայնով աղերսեց՝

—Աղա ջան. իրեք օր է պապիրող չեմ քաշել, մէ պապերօգմ տաս, արևուդ սատաղայ:

Վառեցի մի պապիրօս ու տալով ծերուկին հարցը.

—Ո՞րտեղից էք, ամի՞:

—Խարապայ (աւերակ) Սամսարու աղա ջան:

—Միթէ Սամսարը խարապայ է:

—Կիրակվայ ժաժին Սամսարը Սոզոմու պէս կործանաւ: Եթմիշ (եօթանասուն) տարեկան մարդ եմ, կեանքիս մէջ աղանկ ժաժ չեմ տեսել: Մէմայ (մէկէլ) որ էրթամ, Ասուած շարժանացնէ, ըլլի որ իմ տղայ էղած եթմիշ տարի ապրած տանս տեղնա չը ճանչեմ:

—Մարդիկ խօ չը վնասվան. ամի:

—Մարդիկ. չիտեմ սաղ պրծող էղաւ թէ չէ: Իմ որ չահիլ-ջիւան տղաքս իննը ջանով մնացին մե հողին տակը, աշվնուս արտսունքը չորցուցին, քօռանար ձեր աղամին (հայրը) օղակ (որդի), չը տեսնիր ադ կրակը: Մէ ես այսի աղսիկեաթակնուն (կանանց) հետ Ասու հրաշքով պրծայ: Աշխ, Ասու աննին մեռնիմ, ինչի մեզի ամէկէն չը թաղեց, որ հիմի անօթի չվլաղ աս կրակնուն մէջ շտավկտէինք:

Պէտք էր նկարիչ լինել ծայրահեղ թշուառութեան այդ կենդանի պատկերը նկարելու համար: Իմ առաջ մուրացկանի գաւազանն արդէն ձեռին, կանգնած էր մի ծերուկ. բայց ոչ, մի կենդանի մեռեալ, որի գունատ գէմքը կարծես միանգամայն կորցըել էր մարդկային սրտի զզացմունքներն արտայատելու բոլոր ընդունակութիննը: Միայն արծուի մե ու չորացած աշքերն էին. որ աղերսագին հայեցքով արտայատում էին ծերուկի մեծ վիշտը:

Մինչգեռ յաղթանդամ ծերուկը յենված գաւազանին իր գտոն օրհամն էր ողբում, նրա այրիացած հարսներն յոզնած, պաղ ձիւնի վրա անփոյթ նստած՝ դառն հեկեկում էին, որոնց ձայնակցելով որբացած երեխաները հաց էին խնդրում: Կառապանիս հրամայեցի ճանապարհի պաշարս տալ թշուառներին: Քաղցն ամեն ինչ մոււացըել էր: Ամօթխած գեղջկուհիները, որ գուցէ ուրիշ անգամ չը մօտենային ամենաշնչին հարցիս անգամ պատասխանելու, լացող երեխաներին թողած՝ քաղցած գայլի պէս վրա թափիցին ու իրանց ձեռքով սկսեցին քրքըել պայուսակս, որից գեռ հացը չճանած՝ մի կողմից ագահարար կոխում էին բերանները:

Գնում եմ առաջ: Գիւղական մի կոտրտած սահնակ դանգաղ ընթանում է ճանապարհով, կարծես գդուարանում էր տանել իր «ծանր» բեռը: Միջահասակ մի գիւղացի, շագանակագոյն մօրուքով ու կապոյտ աշքերով, պառկած էր սահնակի մէջ, երեք հատ էլ մերկ երեխաներ չորս կողմը շարված:

— Ո՞րաեղից ես, լարեկամ. հարցը նրան: Պատասխան չկայ. ապուշի պէս մի ըոպէ կապոյտ աշերն յառեց երեսիս ու փակեց:

— Զանջղացի է (Քեժանոցի), պատասխանեց կառապանը, հողին տակն էր մնացել, օտվին վառել է. քաղաք Խօշպիթալը կը տանինք (հիւանդանոց):

— Սահմանից բաւական հեռու հետեւում էին մի խումբ գիւղացիներ իրանց մանր ու խոշորով։ Դրանք աղջտի զոհերն էին, որ շտապում էին քաղաք բարի մարդկանց մօտ պատսպարան գտնելու։

—Դուք մրտեղից էք բարեկամ:

— Զանջղեցի ենք աղա:

— Ե, ուր կերթաք. Զանջղանաքանդվաւ. ինչ է ախպար:

— է՞հ, աղմ, աս մեր մեղքն որ կայ, ատիկայ ՏԵՐ
ՔԻՆ է մեղի:

—Ի՞նչ մեղք:

—Ալ ինչ ըլլի, աղա. քիւֆիւր (հայհոյանք) ըսես կենենք, գողութեն կենենք, իրար արտ ու չայիր կաւրենք, հարուստը անխիղճ, աղքատը նախանձ ու հպարտ, էրկու կապէկի համար ծնող հարերս կը ծալիքնք, էլ փողի ու խաթեր համար սուտ զըրցիլն (խօսել) ու սուտ երթում էնելն ով ամեն աւուր բան է դարձել, վէր մէկն ըսեմ տահա, եսսիմ (ես ինչ գիտեմ): Դիա (ահա) անցնող շաբթու էր կենա այդի ծակծկելուն, ծակծկելուն աեսալը սանքով որ կերթար, գնաց քանիմ կապէկի համար հոգին սևեց, իրեն պէս քանիմ փշանալուի (անախտանների) հետ սուտ վկայութեն առւեց, Ասսու գառին պէս անմեղ մարդոց արունքը մտաւ: Յթլըդ (իհարկէ) ժաժ կըլլի (երկրաշարժ), աղա ջան, անոնց արունքն է Ասուած մեղնէն կուրէ:

— է ինչպէս եղաւ, որ էդ մարդու ոտները վառաւ:

— ինչպէս, այ ինչպէս. մենք էտոնց օդան նստել էինք, ժամն որ ելաւ բիրադիս (բոլորս) փախանք գուս։ Աղ մարդուն (մեղայ Ասսու, մեղայ) զիտես թէ Ասւած գալ-կապ էրաւ, փէշըին (վառարանի) քով նստած տեղէն չկրցաւ էլ-

լել: Պատը էկաւ (փուլ եկաւ) փեշքին վրա, կաս-կարմիր փեշքն ա ատոր ոտպնուն: Դեօր (մինչև) ժամն անցաւ, դոր խելքերս զլիսնիս էկաւ իրիկաց դէմ հանեցինք աղ փշանալուին. ոտպին միջացէն (մէջքից) հետ քեապապ էր էղել (խորոված):

Խօսակիցս ուզում էր թափել իր սրբի բոլոր մաղձը,
բայց ևս ընդհատեցի նրան։ Ինչպէս երկում էր նրա պատ-
մածի տոնից, սահնակով՝ գնացող վիրաւորը գիւղական նշա-
նաւոր «վամպիրներից» էր կամ նրանց զլիաւոր գործա-
կիցներից մինը։

9.

Փոքրիկ գետակի ափին, բլրակների մէջ երեսում էր Արագովան: Ես մտադիր էի չէի մանել այդ գիւղը. սրտա-արոփ շտապում էի հարիւրասոր զոհերի անքանդակ սև գե-րեզմանները տեմնելու: Բայց ակամայից ուշքս գրաւեցին գիւղի ծայրում սպիտակ ձիւնի վրա տարածված սև սև կոյ-տերը դրանք անտուն, անսպասատան գիւղացիների ժամա-նակաւոր վրաններն էին: Յիշեցի Սիրիքիալի էսքիմոսներին, որոնց ընակարանների մասին գաղափար տալու համար ահա-գին ժամեր էր գործադրում մեր աշխարհագրութեան ու-սուցիչը:

Մօս մի քառակուսի սաժէն տարածութեամբ փորած
էր ձիւնը կէս սաժէն խորութեամբ ու ձինէ պատերի վրա
ձգած թեթե տախատակները ծածկված էին խոտէ խսիր-
ներով ու բրդէ թաղիքներով։ Ես զարմացայ թէ ինչու էին
շինված այդ մահագուժ որջերը, քանի որ Արագովան, քա-
ղաքում ստացված տեղեկութիւնների համաձայն, չինասված
գիւղերի թւումն էր։ Մայ այդ չինասված գիւղը, սա-
կայն տուն չգտայ, որ փլած բաժանմունքներ չունենար։
Նոյն իսկ արքունական դպրոցի՝ կրով ու քարով շինած հո-
յակապ շինութիւնը միանգաման քառակուսի է և տապալ-
վելու վրա էր։



Նոյն դրութեան մէջ գտայ և ճանապարհիս վրայի Զակ, Բուզաշէն, Գրկնա ու միւս գիւղերը. նոյն կիսաւեր տները. նոյն գայլի որջերը. խսիրներով ու փալասներով ծածկված ժողովուրդը, կին ու տղայ, գրեթէ բոլորն էլ դուրս էին, խումբ-խումբ հաւաքված լուռ քչվչում էին, կարծես մէկից խիստ քաշվում էին: Ծհոելի սարսափի ու դրօշմն իսկոյն նկատելի էր նրանց դժգոյն երեսին:

Սողում է սահնակս հարթ ձիւնի վրայով, մօտենում ենք Մերենիային: Միրաս տրոփում է և ակամայից կարծես մի տեսակ երկիւղ տիրում է ինձ: Անգութ արեն էլ մօտենում է իր վախճանին, կարծես նա էլ զարհուրած ընդհանուր սարսափից, երես է զարձրել աւեր Զաւախրից ու շտապում է մօր տաք գիրկն ընկնել:

Զիերը կանգնեցին:

— Հտապիր, կառապան, ուշանում ենք:

— Զիերը խրանում են, չեն գնում. առաջն ինչ որ սև բան է երեսում. պատասխանում է իր արհեստին յատուկ անտարբերութեամբ, դուխարօր կառապանս:

Մարտակի մի երկու խիստ հարուած ստիպեցին ձիերին մի քանի քայլ ևս առաջ գնալ, բայց դարձեալ ականջները ցցած երկչուտ նապաստակի պէս կանգնեցին, կարծես իմաստուն կենդանիներն էլ չէին ուզում ականատես լինել բնութեան ըռպէական անգութ խաղին:

Ելայ սահնակիցս, որ տեսնեմ թէ ինչից են խրտնում ձիերը: Գնում եմ առաջ, և ինչ եմ տեսնում: Զանապարհի կողքին երկու փոքրիկ երեխաներ, նստած պաղ ձիւնի վրա, խիստ սառնամանիքից կապտած ձեռները զրած արցունքուա աշերին, աղիողորմ լալիս են:

— Մալի ծան, մելայ մալի ծան...

— Օ՛ֆ, սառայ, ապա ջան (մայրիկ). Գուրգէնիդ թողիր ուր գնացիր: Մի լայ, նազօ ջան, մի լայ, էամիս (պապը) կուգայ կերթանք աղայիս: 2է էամիս ըսաց թէ ապաս քեռանցս է... Ա՛խ ապա ջան, ինչի մեղի թողիր գնացիր, չիդէր թէ նազօդ կուլայ: Էամի ջան, արի նազօն կուլայ.

Նազօ ջան, մի լայ, նազօ, աչէ (նայիր) ես ա կուլամ...

Միբաս կտրատվեց, երկու փոքրիկ մանուկներ, անտուն, անտիրական, անկարեկից երկնքի բաց-պաղ հովանու տակ սրոնում էին իրանց մօրը, սրտակտուր լացով կանչում անուշ «ապային», որ թոնրի ալ բոցերի մէջ կրակխորավ էր եղել: Խեղճ մանկիլուներ, չփխտէին, որ իրանց թշուառ պապային այլս տեսնելու չէին:

— Տղաք ինչի կուլաք, մօտենալով նրանց հարցը ի ես. կարծելով թէ կարող եմ իմ ներկայութեամը նրանց լացն ընդհատել: Բայց նրանք ինձ տեսնելով մի ըոպէ անթ արթ երեսս նայցին և ապա աւելի ևս խիստ սկսեցին հեկեկալ:

— Մի լաք, գառնուկներս, մի լաք. ես ձեզ կը տանիմ ձեր ապային: Բայց ձեզ ովկ ովկեց էստեղ:

— Էամիս (պապս) բերեց:

— Ինքն ուր գնաց:

— Գնաց որ կովը բերէ:

— Ի՞նչ կով:

— Մեր Մարտալը (կովի անունն է) հետվիս պիտի տանէինք քեռանցս, ճամփեցին ետ վախսւ գեղ, պապս գնաց որ բերէ, մենք մենակ դիւզին օրթան (գաշտի մէջ տեղը)...

Ծերուկ «էամին» սեփական տան սառը վլատակների տակ թողած իր մտերիմների հետ և ամբողջ կեանքի բոլոր գառը վաստակը. իր աւերակ «օջախի» վերջին մնացորդները՝ ջուխտակ թոռնիկներն ու միակ «մարալն» առած փափչում է հայրենի անհիւրընկալ յարկից:

— Դէ արիք, արիք իմ սանքին, ես ձեզ կը տանիմ ձեր ապայինս:

Փոքրիկ նազօն, որ մինչ այդ վախվիսելով երեսս էր նայում, երբ լսեց «ապայի» անունը, կէս ժպտալով վերթուաւ տեղիցն ու մօտենալով ինձ հարցը եց, կարծես «ապայի» քաղցը անունը բացեց նրա թոթով լեզուն:

— Տացու ծան, դու գիտես քելանցս տունը, ապաս հոնէ (այնտեղ է). Էամիս ըսաց թէ էլթանք օլա քելիս ինձի կանքէտ պիտի տայ...:

— Գիտեմ, գիտեմ, փոքրիկս, արիք սանքայիս էր-
թանք էամիկդ էլ վերցնենք ու էրթանք քեռանցդ:

Տեղաւորեցի փոքրիկներին սահնակիս մէջ ու սլա-
ցանք առաջ:

Երեսում է Մերենիան, սիպտակ ձիւնի անսահման ծո-
վի մէջ մի սև օազիս: Սիրտս արաքւում է, միթէ դա այն
Մերենիան է, ուր ես քանի՛ քանի գիշերներ ճանապարհոր-
դութիւններիս ժամանակ գիշերել եմ: Լուս է չորս կողմու,
ձէն-ձուգ կարել է: Էլ չէ լավում անցորդի ճանապարհը
կարող չների հաջոցը, գառ ու ոչխարի քաղցր մայունն ու
մատղաշ հորթերի անուշ բառաշը: Մերենիան մարել էր.
Հարիւրամեայ աւերակների պէս քար քարի վրա չէր մնա-
ցել: Լուռ են և փոքրիկ ուղեսորներս, որ տաք վերարկուիս
տակ գրեթէ արդէն նիրհում էին: Միակ կենդանութեան
նշաններ ցոյց տուող արեն էլ չկայ այլսօ: Սար ու ձոր
քիթ-մուռթ կախել, խոռված մանկան պէս կարծես ուզում
են լաց լինել: Մթնում է. գնա, արի՛, գնա, մտիր մօրդ
անուշ գիրկը. բայց այս անտէր փոքրիկներին ում խորթ
գիրկը պիտի պատսպարէ ու փաղաքչէ...

Մինչդեռ խոր մտածմոնքներիս մէջ ընկղմած ինքս
ինձ հետ խօսում էի, սահնակս կանգ առաւ:

— Հասանք պարոն, մտքերիս խոր յուզմոնքից արթ-
նացրեց կառապանս: Մթափվեցի. ահա և Մերենիան,

Դ.

Լեռան ձիւնոտ լանջին փռված են հարիւր քսանից
աւելի գիւղական խրճիթների սև փլատակներ. խրճիթ-
ների, որոնց իւրաքանչիւր քարը խեղմ շինականի արիւն
քրտինքով ողողված իր հովանու տակ պատսպարում էր
հարիւրաւոր թշուառների լայն ու հատուադէպ հրճուանքը,
խրճիթների, որոնք այժմ իրանց հովանու տակ ծածկել
էին նոյն թշուառների արիւնուայ դիերը: Մերենիան էր
դա: Յիրաւի, որ ամենավառ երևակայութիւնն անգամ եր-

բէք լսելով չէ կարող պատկերացնել այն ահուելի տեսա-
րանը, որ ներկայանում է ականատեսի աշքին: Աղէտի ամ-
բողջ սարսափին զգալու համար պէտք է աշքով տեսնել:
Իջայ սահնակիցս: Ուզում էի գիւղ մտնել, որից բա-
ւական հեռու մի խումբ գիւղացիներ լուռ քչվշում էին:
Բայց ինչ գիւղ. ոչ փողոցն է յայտնի, ոչ տները. կարծես
մի մահագոյժ հողմ թեթև փետուրի պէս խաւնել, տակն
ու վրա էր արել ամբողջ գիւղը:
Մտնում եմ գիւղ:

— Եհէյ, ուր կերթաս, ում տունը կերթաս:

— Ո՛չ մէկի տունը. գիւղը կուզեմ տեսնիլ:

— Գեղը կուզես տեսնիլ. տեսածդ հերիք չէ, ամա-
նաթ հոգի ունիս, որ էս վախտիս էդ թէրմչնուն մէջ կը
հաւատաս: Արի, արի, զուրբան, տեսնել կուզես լուս աշավ
(օր ցերեկով) պտտէ. էս վախտս հաւքն իրեն թեով չի
անցնիլ էդտից, զու ուր կերթաս էդ սատանի ըները:
Խեղճեր, բնութեան սարսափը բաւական չէ, նախա-
պաշարմունքն էլ միւս կողմից է ահարեկում: Իրանց ճա-
կատի քրտինքով շինված սեփական տները սատանի ըներ
էին դարձել:

Մտայ աւերակների մէջ: Յիրաւի քար քարի վրա չէր
մնացել: Գիւղական խարխուլ իւրճիթի քարէ պատերը լըց-
վել են տան մէջ ու հողէ ծանը ծածքը, իր տակ առնե-
լով գեղջուկի նահապետական օջախն իր աշխատաւորներով,
կարծես հաստ գերանները դիմամբ մահագոյժ խաչերի
պէս տնկել է գէպի երկինք:

Բայց ինչ-որ սարսուռ տիրում է ինձ. չորս կողման
լուռ, աւերակ. մողմ քամին էլ մեռելային շնչի պէս փշում
է ականջիս տակ: Ինչ-որ խուլ, մարդկային հեծկըլտանք է
լսվում: Ո՞վ կարող է լինել այս պահուս կենդանի զոհերի
անքանդակ գերեզմանոցին մէջ: Գուցէ սև հողէ պաղ վեր-
մակի տակ տնքացող կիսամեռ զոհերից մինն է: Բայց ոչ,
ահա առաջս աւերակների մի կոյտի վրա սև ուրուականի
պէս մոլթի մէջ երեսում է մի մարդկային պատկեր որ կա-

տաղի բորենու պէս ջուխտ ձեռքերով փորում է իր դառն
արցունքով հեղեղած սառն հողը: Մի ծերուկ գիւղացի էր,
դա գլխի ալեխառն մազերը թել թել էր արել երեկոյեան
ցուրտ քամին: Նրա շարժումները տարօրինակ էին ու ար-
ցունքող դժոյն գէմքը, որ կիսաղօտի մէջ հաղիւ նկատելի
էր կոշտ ձեռքերով փորած հողի պէս սև էր: Մօտենում եմ:
— Ո՞վ ես բարեկամ.

Զայն չկայ. գիշերային ոգին լուռ շարունակում է
տխուր աշխատանքն ու քթի տակ ինչ որ ինքն իրան
մըմնջում:

— Ի՞նչ ես անում այստեղ, այ մարդ. կրկնեցի հարցու:
Ծերուկը բարձրացրեց ալիխառն զլուխն ու խոժու,
արիւն արցունքով լցված աչքերը մի բոպէ երեսս յառե-
լուց յեայ, կարծես բարկացած, որ խանգարում եմ իր մե-
նաւոր տխուր աշխատանքը, պատասխանեց.

— Քեզի ինչ, ես ինծի համար կը փորեմ. կեցի, կե-
ցի, քիշը ա փորում, գլօխս կը հաւքի մտնիմ կը մէջը. ախր
Սանդուղս ու Կարօս հոդ են, չէ տացու ջան... սաղ են,
սաղ... ոտպնուդ մեռնիմ, մէմ անկաջդ հողին դի... աշէ,
աշէ... Դիան Սանդուղս կուգայ ոտպիս քաշէ (գուլբաներս
հանէ) որ պառկիմ... արի, արի, բալաս, գիշերն անցաւ...
տիան Կարօս ա Կարօս... հա հա, հա...

Ալեխառն ծերուկի գիւային քրքիջը գիշերուան այդ
պահուն սար ու ձոր դողացրեց: Ես սարսափից ապշել, քա-
րացել էի. Քիչ էր մնում, որ ես էլ հաւատալով գիւղացի-
ների նախապաշարմունքներին, թշուառ խելագարին, որ հո-
ղակոյաբերի մէջ իր միակ որդուն ու հարսին էր որոնում,
շար ոգիի աեղ ընդունէի: Ինքս ինձ հաւաքեցի ու դուրս
եկայ աւերակներից, բայց մինչեւ այժմ էլ ծերուկի խոժու
դէմքը աչքիս առաջն է, որ կարծես դեռ կանչում է՝ «արի
բալաս, արի. գիշերն անցաւ...» Բայց խեղճ ծերուկ, քա-
նի քանի սև ու մութ գիշերներ պիտի անցնեն ու «անուշ
բալադ» չպիտի լսէ աղերսագին ձայնդ: Գուլբաներդ «քա-
շելու» կը կանչես, բայց գուլբաներդ «քաշողն» էլ գործողն

էլ սև հողի տակ լուռ ննջում է ու էլ չպիտի վազէ ծերուկ
կեսրաբոջը ծառայելու:

Ու քանի քանի մատաղ հարսներ իրանց զառամեալ
կեսրայրներին թողին անմխիթար խելագարութեան ճան-
կում և յուսահատ գերեզմանի չէմքին ու դեռ քանիսն էլ
պիտի գիմեն կորստեան այդ անեղը անդունդը:

Ե.

Գիշեր է, պարզ ու անամպ գիշեր: Կապուտակ եր-
կընքի աստղերը խլվան աղջկան շընադ աշքերի պէս վառ-
վուում են. Նրանց վրա չէ աղդում Մերենիայի աղեկտուր
հեծկտանքը. աւերակների սև սև ստուեները հեռու, շատ
հետու են նրանցից: Գիւղի ափին, խելագարի գիւային քըր-
քիջի պէս, հոհուում է կրակի ալ բոցը, որի կաս կարմիր
շողը լուսաւորում է խոտերի ահագին դէղերը: Բորբոքված
խարոյկի շողը ձեռքերը ծոցերնին կանգնած են քսանի
շափ գիւղացի երիտասարդներ, որոնց վիճակլել էր սեփա-
կան տան վլատակների դժբախտ գիշերապահի պաշտօնը
վարել: Վառվում է խարոյկը, բայց մալել են Մերենիցի
երիտասարդները: Ո՞ւր է նրանց զիլ «լէլէների» ու «մէնի-
ների» անուշ զլգլոցը, որ լուսնեակ գիշերներին սար ձոր
էր գլրդացնում ու քանի քանի անմեղ գեղջկուհների գի-
շերուայ քաղցը քունը կտրում:

Մօտեցայ խարոյկին: Գժբաղդ գիշերապահները պատ-
րաստվում էին ընթրելու: Բայց ինչ ընթրիք... փոված
կապերատի վրա շարած էին 8—9 հատ տեղական կլոր գա-
րի հացեր, որ հաղիւ թէ 4—5 ֆունտ գար. կապերատի ան-
շուք սփոսցը շընապատել էին 15—18 դժգոյն երիտա-
սարդներ, որ ամբողջ օրը սառցակոյտերի հետ կոռուելուց
յետոյ, այժմ քաղցած ստամբուները յագեցնելու մի կտոր
ու ցամաք հաց էլ չունէին: Ինձ տեսնելուն պէս գրի-
չոր ու ցամաք հաց էլ ոտի կանգնեցին ու սիրով ընդունեցին բարես:
— Նստէք, տղաք, նստէք հացերնիդ կերէք:

Թայց տղաքը լուռ, ինչ որ տատանման մէջ կանգնած էին. վերջապէս հասակաւորներից մինը համարձակվեց ասել.

— Հրամեցէք, վարժապետ ջնն, բրդում ա զու առ, ինչ էնենք, քեզի լայեղ (արժան) բան շունինք հըմը, դուք ա գիտէք մեր հալը. Ասված էսման (էսպէս) էր կամեցել. ինչ էնենք, փառք տուածին:

— Նստէք, նստէք, ես շնորհակալ եմ. Աստուած ողորմած է, ամեն ինչ էլի կարգի կնկնի, հանգստացրի ես:

— Տղաք, Ռափն ուր է:

— 2ը կայ ծօ, ինչ եղաւ. շըլլի կենա (էլի) Տալօին քով գնաց: Տղաք էդ խեղճը վերջը խելքը թոցնէ կը:

Յիրաւի Ռափը Տալօին «քովն» էր: Խարոյկից մի փոքր հեռու խոտերի արանքում շարված էին միմեանց մօտ 8—9 հատ կանանց դիակներ, որ հէնց այդ օրը հանած էին փլատակների տակից: Նրանց վրա չկար գիւղական հասած աղջկայ սովորական արդ ու զարդը. Փէս ու փիւսկիւ նետած մի կողմ՝ շորերը պատառուած, մաղերը գղգղված, կարկահար նորահաս հասկերի էին նման: Սարսափելի էր նրանց սիպտակ ճակատների վրա գրոշմված մահուան տագնապի ու կնիքը: Խոշոր աշքերը չուած, մարմարի պէս սպիտակ ատամները բոլոր ուժով սեղմած կարծես վերջին ճիգն էին թափում անգութ ճակատագրի դէմ կոռուելու: Ումանք էլ աղերսագին հայեացքները յառած դէպ երկինք, կարծես գթութիւն էին հայցում ու ձեռքերը տարածած մէկին օգնութեան կանչում: Դիակների մօտ, սպիտակ ձիւնի վրա. անհոգ կոթնած էր մի թխադէմ երիտասարդ, որ ապուշի պէս անփոյթ հայեացքը յառած մէկի աշերին, կարծես ուղում էր նրանց մէջ կարդալ իր բաղդի վերջին խօսքը. Բայց նրա հայեացքին չկար պատասխանող «մէկը», որի վառվուն աշերը վաղուց մարել էին ու հմայիչ հայեացքը սարցէ քօղով քօղարկել: Հին ծանօթի պէս մօտեցայ ու թէից բռնելով սթափեցրի դառն ու խարուսիկ երազներից:

— Ռափ, երեխայ խօ չես, ախը ինչ ես անում, չուժկու երիտասարդը քաշվելով անծանօթիս ներ-

կայութիւնից՝ ինքն իրան հաւաքեց, մէկ դիակներին նայեց ու արգունքու աշքերն ինձ դարձնելով կուտակված ամպի պէս փլաւ:

— Ա՛խ, աղա ջան. կըսես, հըմը (արդեօք) կեանքիդ մէջ էսման ցաւըմ տեսել ես... Ասված տիւշմընիս շըցըցնէ... Ա՛խ, ինչ կըլլիր, ծալօ ջան, էդ անուշ լիզուդ լիզուկս դիպած շըլլիր, եա իմս ա քուկիդ հետ տոնվիր պըրծէի...: Ռափի ընկերները ուժով հեռացըլին նրան անշնչացած Տալօի մօտից, ովի աղերսագին մարած հայեացքը կարծես հետեւում էր անուշ «եարի» համր ու դողդոջ քայլերին:

Հանգչող խարոյկի վերջին կայծերը երկնքի դողդոջուն աստղերի պէս պէծին էին տալիս: Քամին դագարել էր. ցուրաը խաղաղել, լուսինն էլ պճնված նորահարսի պէս եղջիւկները տնկած մի խարդախ ժախտ էր նետել Սամսարի սարելին: Բայց նրանք լուռ էին. պալ երեսներին ժպիտ չէր մնացել: Զիւնածածկ ժայռերի ու սեստուերները բազմահոգ կնճիռների պէս մթագնել էին վեհ լեռների հակայ կատարները:

Սամսար պիտի գնայի, բայց դիշերվան այդ պահուն ոչ միայն սահնակով այլ և ոտով անհնարին էր բարձրանալ այդ սեպ լեռների ոլոր մոյոր ուղին: Ճանապարհ ընկայ Քարալէթ, ուր միայն յոյս ունէի գիշերել այդ աւեր գաւառամասում:

Զիերը հանդարտ գնում են, կառապանս մրափում է ննջում են և փոքրիկ սղեկիցներս, լուսնի գունատ շողքը լերան լանջի սպիտակ ձիւնի հետ գրկախառնված՝ լուռ քշիչում են: Յանկարծ այդ մենաւոր լուռթեան մէջ լսվում է մի ունոց. ձիերը խոռվոռալով ականջները ցցում են ու մեծ-մեծ քայլերը հանդարտեցնում. կառապանս քթի տոկ կարծես ինչ-որ ձիերի լեզուով մոմուում է: Գնում են ձիերը, ես էլ խոռվասուզված յուղիչ մտքերիս ովկիանոսը՝ գնում եմ հեռու շատ հետու: Կրկնում է ոռնոցը ու կարծես հէնց սահնակիս մօտ. ձիերը պատասխանում են մի խոպոտ խունչով ու ականջները ցցած կանգնում: Կառա-

պանս տատանվեց ու սթափուեց անուշ մբափից: Ես ճանապարհն էի դիտում, երբ յանկարծ քնաթաթախ կառապանս, որ սանակից իջած շուրջն էր նայում՝ մատով ինձ ցոյց տուեց.

— Գայլեր, պարմն...

Ես սարսափեցի. գայլերի մի խառնիմաղանչ վոհմաք ցատկտելով բարձրանում էր լեռն ի վեր, մի երկուսն էլ բրդոտ պոչերի վրա պըպղած, դէպի մեզ նայելով ոռնում էին: Ես ձեռու մեքենայալար տարայ ատրճանակիս, բայց փորձված կառապանս արգելեց ինձ.

— Ափսոս է փամփուշտներիդ, պարոն, ատրճանակիդ վրա այնքան էլ յոյս մի դնիլ, եթէ նրանք կատաղած լինեն: Բայց այս ամսին գայլերը մարդու չեն վնասի. աւերակ գիւղերի նեխվող դիերի հոտն է նրանց ցած կանչել լեռներից:

Կառապանիս դիլ սուլոցը յիրաւի փախցրեց ոռնացող գայլերին:

Գնում ենք, կառապանս շտապեցնում է ձիերին, որ կարծես իշխանի մօտ լինելն զգալով, մոռացել էին յոդնածութիւնը: Դէմուղէմ առաջներս երեսում են սե-սև կոյտեր: Դա մի գիւղ էր, բայց դարձեալ լուռ, դարձեալ մոռայլ, ձայն ու ծպտուն չկայ: Եխտիլան էր գա, աւերակ, քարուքանդ եխտիլան: Կարծես Մերենիայի սև ստուերը փոռուել էր և այստեղ: Մօտենում ենք գիւղին: Նազօն զարթեց.

— Ապա ծան, ապա ծան, ես ա կուգամ... աղաղակեց երեխան, բոլոր ուժով փարուեց ինձ ու դարձեալ լուեց:

Քնի մէջ էր. ով գիտէ. ինչ դառն երազներ խանգարում էին թշուառ փոքրիկի անմեղ քունը: Մտնում եմ գիւղ. գիւղից դուրս շարուած են ձինապատ որշերը, որոնց մէջ պատսպարուում է անտուն ու մերկ ժողովուրդը: Էլ ուշ էր, չուզեցի կանգնել, շտապեցի Բարալէթ:

Հօյակապ դպրոցի կրակները գեռ վառ են, դպրոցն կենդանութեան մէջ է, գիշերուան այդ պահուն էլ մտնող ելլողին թիւ չկայ: Ուսումնարանի դռանը կանգնած է մի

ընդարձակ ձմերային վրան: Դունից ներս նայեցի, ասեղ գցելու տեղ չկայ, կին ու տղայ, ծեր ու մանուկ, թափուած իրար վրայ, ոմանք հանդիսաւ ննջում են, ոմանք էլ լուռ քչփշում:

— Ո՞րտեղից էք, քոյրիկ, հարցրի մի կնոջից, որ սափորով ջուրը ձեռին մտնում էր վրան:

— Ո՞ւրտից կուցես, աղա. ամեն տեղէ ա կանք:

— Մերենեցի կան էղաեղ:

— Ինչը՝ զ (ինչպէս) չէ, իս ա մերենեցի եմ, ինչ է եղել:

— Երկու մերենեցի տղաք կան հետս, արի տես կը ճանչես:

— Վոյ քոռանամ, ինչը (ինչպէս) չեմ ճանչել, Գուրգէնն ու նազօն են. էս ուրախ բերիր, աղա ջան: Էտոնց հօրքուրն ա տնով հոս է: Մարիկնիդ մեռնի, օղնլ, էդինչ աւուր մնացիք, ասաց կինն ու վագեց վրանը, որտեղից մի բոպէ յետոյ դուրս եկաւ Գուրգէնի ու նազօն բաքրոջ հետ:

Անտէր երեխաներին առժամանակ յանձնեցի հօրքը խնամքին:

Մտայ գպլոց, բոլոր ունեակները լին էին վիրաւոր հիւանդներով ու անսուն ու անապաստան, դըթէ մերկ գիւղացիներով: Ստիպուած էլ ի գիշերելու մի այլ տեղ որոնել. դիմեցի տեղական քահանայի տունը: Կեանքիո մէջ ամենայեաին գիւղացու դուռն էլ չէի տեսել հիւրի առաջ փակսւելիս: Բայց գիւղացու դուռ չէր, «աէրտէրի» դուռ գիւղին: Հայց գիւղացու դուռ, որ առանց «աշնամէր», այն էլ հարուստ տէրտէրի դուռ, որ առանց «աշնամէր» չի բացուի ոչ ոքի առաջ: Գիշերելու մի տեղ ինդրեցի:

— Տեղ չունինք, վարժապետ:

Ու ամուր պեղկերը շրմիսկ փակուեցին օտարական ճամբորդիս առաջ...

Զ.

Առաւօտ էր. ցուբտ ու սազաղ տուաւօտ: Դեռ արև չկայ ու մոխրագոյն մշուշը պատել էր Բարալէթը: Գիւղը

մի առանձին կենդանութիւն էր ստացել: Փողոցներում անց ու դարձ անողներին թիւ չկար: Կին ու տղամարդ, ծեր ու մանուկ ուր որ շտապում էին: Դոքա Բարալէթի հարս ու աղջիկները չէին, որ ուրախ հոհոալով ամեն առտօտ վաղ սառսրոսցին շտապում են տան ջուրը կրել ու իրանց գործին նայել:

—Մարի ջան, ոտիկս մսաւ...քա ջան, ձեռվիս թափան... աղեկտուր հեծկլաանքով կանչում է մօր փէշից քաշ ընկած փոքրիկ մանկիկը:

—Քալէ, ձազս, քալէ, քալէ քեզի պուպուշ փոփոլ (սիրուն ոտնաման) առնեմ...

Թէպէակ խեղճ «մայրիկ»-ի ձեռներն էլ սառել էին, բայց շտապում էր ժամ առաջ հասնել դպրոց, ուր շորեր պիտի բաժանէին:

Ահագին բակում, խոնվող մերկ ու բոկոտն ամրոխից ասեղ գցելու տեղ չկար: Բոլորն աշխատում են իրաք հրելով, քաշքելով, մօտենալ փակ դրանը: Ահա բացուեց դուռն ու մի կորացած պառաւ «հագած-կապած», մի պող էլ կոնատակին դուրս եկաւ ներսից: Պառակի տարօրինակ հագուստն ակամայ մարդու ծիծաղն էր շարժում: Թաղիքէ կօշիկների երկար ճաքերը, որոնցից միայն մէկի մէջ մի բուռը պառաւն ինքն ամբողջապէս կմտնէր, հասնում էին մինչև մէջը: Կարճ կաշուէ մուշտակը միայն գլուխն էր թողել գուրսը, որ փաթաթած էր սպիտակ շալով: Պառաւը դեռ նոր էր գուրս գալիս, որ նրան հրելով ուզեց ներս մտնել մի միջահասակ գգգուած գիւղացի:

—Ծօ, դու, ուր, կորացած գլուխը մի փոքր բարձրացնելով, բարկացած կանչեց պառաւը:

—Նես, ուր, հալաւ (չոր) առնեմ...

—Ծօ, քեզի չոռ է դիպել, որ հալաւ պիտի առնես: Ամօթ չէ քեզի, ամբոնիդ լիքը հաց, տղաքդ փառք Ասսու սաղ-սալամաթ, իմ քաշովս փարայ ու թեամեասիւկ (մուրհակ) ունիս, ինչի եկել կենա (էլի) քանիմ կտոր չըլի համար երեսդ դէմ տուել էս խեղճերուն հացը կկտրես... Թու

առիդ ու ամօթիդ (պատուիդ), ամնչես լաւ է, լաւ . . .: —Դէ ձէնդ կտրէ քեալթառ, զու չեղար հիմի հոս ալքատն ու զեանգինը (հարուստը) ջոկողը, ջերէդ ինչ կերթայ...: Հոս (էստեղ) չէր ըլի՛, քու առկնիդ (ատամներդ) բերանդ թափելը կտեսնէիր..., մի փոքր կամաց աւելացրեց գիւղացին.

—Վայ վիշանաք, զնաք, օղուլ, վիշանաք, բան չեմ ըսել, Ասված ձեզի ա էս աւուր էյթաճ էնէ... (արժանացնէ):

Պառակի յանդուզն խօսակիցն էխտիլա գիւղի յայտնի հարուստներից մէկն էր, որ խառնուել էր մերկ ու անտէր մնացած խեղճերին մի քանի կտոր շոր ստանալու համար: Յետոյ ինչպէս լսեցի հազարների տէր մի քանի գիւղացիներ էլ օրերով սրա նրա շնմերն են մաշել ու պատահողի ոտքը լիզել մի քանի փութ ալիւր ստանալու համար, այն ինչ իրանց ամբարներով ցորենն ու գարին պահում են գարնանը ծախելու: Ամօթ ձեղ, ամօթ...:

Ծանը ապաւորութիւնների տակ դուրս եկայ բարձրէթից: Սամսար պիտի գնայի: Դեռ արկ չկտր, բայց Մերենիայում աշխատանքն եւ էր գալիս: Կալոցուան պէս գիւղացիք բոլորը դուրսն էին, բայց միայն տղամարդիկ, և այն էլ եղանի ու հորսելու փոխանակ ձեռներին ունէին թիեր ու բահեր, լումեր ու կացիներ: Զկար այնտեղ գիւղու ամեն աշխատանքին անբաժան լծակից կինը: Նոցա մի մասը վոնդուած իր փայփայած օջախից օտարի յարկի տակ ապաստան էր որոնում, իսկ մի մասը սեփական տան սկ փլատակների տակ ծանը տնքում էր: Մէկը միւսի յետեկից հանում են դիեր, կապտած ու ջարդուած ու շարում խոտի դէզերի մօտ:

Անցայ Մերենիան, մեռելների շտեմարանը, շընցի Սամսարները, իջայ Բուղաշէն, Տրկնայ, Բալխոյ, Ականայ ու հասայ Զանջզայ (թէժանօ): Ամեն տեղ աւեր, անմարդաբնակ, սկ սկ հողակյալերը միայն մահագոյժ արձանների պէս փուել էին ձիւնի սիպտակ սաւանի վրա: Ինչպէս շընցածս միւս գիւղերը նոյնպէս և Զանջզան միայն տղամար-

դիկ էին մնացել սև գերեզմաննոցների վրա ողբալու: Գիւղը շրջելուց յետոյ ինձ առաջնորդեցին գիւղի մէջ ծածկի տակ մնացած միակ գոմի օդան: Գոմում չկային աշխատասէր գեղջուկի աշքի լոյս գոմշուկները, եղների ու կովերի սիրուն շարքերը: Նոցա տեղ սև հողը բարձրացել էր մինչև մսուրքը: Բայց գոմը տաք ու նոյն իսկ տօթ էր: Օդան կլոր ցածոտն սեղանի շուրջը, թղթերն աւաշներին, նստած էին երկու պարոններ: Դոքա սոսկալի աղէտի սև տեղեկագիրն էին կազմում: Սեղանի մօտ ձեռքերը ծոցին գըլխակոր կանքնած էր մի միջահասակ գիւղացի: Նրա գէմքը խոժոռ էր ու հայեացքը յուսահատական: Զգիտեմ անցած երկար ու ձիգ տարիները, թէ դառը հոգսն ու կարիքը նրա մագերն արգէն բոլորովին սիպտակացրել էին:

—Քանի՞ տարեկան ես, հարցրեց պարոններից մինը:
—Տարիս չխտեմ, աղա, հըմը (բայց) առջի ժաժին (երկաշարժին) չկայի հըլը.

—Երսնհինգ-քառուն տարեկան կըլի, աղա, վրա եկան չորս կողմից դրացիները:

—Բաս ինչո՞ւ ես էդպէս չուտ սիպտակել:
—Ինչի եմ սիպտակե՞... Մ'եր քաշածն ուրիշմ քաշէր, աղա, հիմի սաղ ա չէր մնայ: Կարկուտը կուգայ արտերս կզարնէ, զաւաւը (եղեամ) հացերս կտանի, ցաւը, էն Ասսու պատուհասը մալերս ու ոչխրնիս կը ջարդէ, դիւլիկնիս (ապրուստներս) կը կարէ, ժաժն, որ եկաւ տներս աւրեց, օջնիս մարեց, էտոնք բիլադի (բոլորը) աղա Ասսու պատիժն են, բան չունիմ ըսելու ինքն է տվել, ինքը կառնէ, գլխնիս կախենք պիտի քաշենք: Հըմը էս մարդուն տված ցաւին, մարդուն կրակին պէս սիրտ վառող ջան ու չիգեար դադող բան չկայ, աղա: Մ'իս ժաժն եկաւ մէմ ինչ որ պիտի էնէր էրաւ անցաւ... հըմը աղ բոլբոլական կրակնին Ասսու իրեն օրը գլխնուս վերըթին կայնած են: Վայէ թէ մէկը էրկու սալ խոտ ունենայ, բերեն ջուխարմ 40—50 մանէթնոց եղ գոռով գռնէն նես կէնեն ու 100—120 մանէթի բարաթը ջերերը գնեն կերթան... Բերնին է ըն-

կել մէկը ձէն հանէ, խեանչեալը օխտը տեղէ վրա կուգայ: Խոտ չունեցար կենա (էլի) վայ. տեղին ա ջոկ բարաթ պիտի տաս, որ քաղես բերես էնոր եղները գիրացնես: Գիրացուցիր ա օրա գիտես ինչ աղա (այն ինչ «աղա»-ն ըգրաղված էր իր թղթերով ու բոլորովին չէր էլ լսում գիւղացու կողմնակի պատմութիւնը), զարնան գլոխ ջուգտմամալ տնէդ առաջ կխառնես տանիս կը Թիֆլիզ, որ ծախես գեօրա (իբր) գեարդդ հոգաս: Հըմը Թիֆլիզ որ հասար վեց է քեզի մալի տէր էնող: «Աղանուն» մէկը հոն նստած է, մալը ձեռնէդ կառնէ, իրեն ձեռքով ծախէ ու քեզի ա քըրֆլըտելով (հայոյելով). հըլը ըլլի որ (դեռ կարելի է) քանիմ հատ ա թեափալիդ (գլխիդ) տալով գեղ կճամբէ: Տեօր (մինչև) գարուն հէշ խարարա չես ըլլի թէ մալդ ինչդէ ծախվել: Գարունն «աղա»-ն կուգայ «հաշիւ տեսնելու»: 60—70 մանէթ երկու ջուխս մալիդ տեղը բարաթէդ դուս կը զարնէ ու լաւըմա բիաբուռ. կենէ (կանապառէ) ու կերթայ թէ եղները լաւ չէր գիրացուցիր, խարար էիր էրել: Էշը աղ է որ կրակն ընկար, տահա (էլ) հուր-յաւիտենական նեա (ոչ) տալէն կպրծիս նեա բարաթէն, դունա տնով, օղուշաղով իրենց զուլը (գերին) պիտի ըլլիս: Ադ հըլը սալթ (միայն) մալին առուտուրն է, հըպը մեկալոնք (միւսները)... Օ՛փ, աղա, ատոնց էրածնուն վէր (որ) մէկն ըսեմ, հէքեաթ բիլա էղան գաղէթ ընկան...: Դուք գիտէք տահա, ոտիլիդ ենք ընկել... ես նեա (ոչ) հալաւ (շոր) կուզեմ նեա հաց, թէ կընաք մէ իլլեանը (ճար) էրէք, մեզի աղ անմարելի բոլբոլական կրակներէն ազատեցէք...: Մ'էկ մէկ խիւլակ (խրճիթ) ունէինք ան ա Ասսու ողորմութենով աւրաւ պըծանք, մեզի աս գեղէն հանեցէք զիար դիար կորուցէք թեաքի (միայն թէ) աղ մարդաց «ժաժէն» պըծուցէք տղաքս ձեզի մատաղ կենենք...:

—Ծօ, սուս... հերիք զլակէդ վեր դուս տաս... ինչ կը զլրցես:

—Ծօ, տահա հօրուս հասաւ... նամուսը ոտաց տակառան, խեղճ հալւոր հօրս անաճալ (անժամանակ) տամ-

լայ էնիլ տուին (կաթուած, տղոցս դիոլիկը (ապրուստը) կտրեցին կենա սուս... Սուս, սուսով ուր պիտի էրթայ, թնդ իմանան խեանչեալն իմա փորս կոխեն մէկէն ազատիմ աս դժոխքէն պրծիմ...:

Խոհեմ դբացիներն ուզում էին լոեցնել երկրաշարժի սարսափից հաղիւ բացված խեղճ գիւղացու փակ լեզուն, որ ուզում էր մի անգամից թափել տարիների ընթացքում վիրաւոր սրառում դիզված թունալից մաղձը: Նա լոեց ու էլ չկարողացայ իմանալ հօր եղերկան մահը, որ ընտանեկան գաղտնիք էր ու գաղտնիք էլ մնաց:

Գաւառիս «ջօջ» վաշխառուի քստմնելի «սխրագործութիւնների» մասին գիւղացիների «լուռ» պատմածներն ինձ առասպել էին թվում, բայց յետոյ ինչպէս տեղեկացայ դոքա օր ցերեկով կատարվող իրողութիւններ են, որոնց տակ սակայն դեռ մինչ ցարդ էլ խեղճ գիւղացիք գլխիկոր տնքում են ու ոչ «աղաները» ու ոչ էլ «պարոնները» կարողացան ամենի «մարդ-գաղանին» սանձահարող սանձ դտնել . . . :

Ցիրաւի Անիի պէս Ցովհան երզնկացու «անէծքին» էր ենթարկուել այդ գաւառամասը ու Սոդոմ-Գոմորի պէս ամեն տեսակ պատուհասի ասպարէզ զառել: Մարդկային թշուառութիւնն իր բոլոր կատարելութեամբ կարելի էր տեմնել այդ երկրում:

Դառն տպաւորութիւնների տակ դուրս եկայ Զան-Ջրայից ու վախենալով, թէ Ղովտի պէս աղի արձան կը կարիմ, առանց յետ նայելու դարձայ քաղաք, յիտկս թողնելով տանջանիքների մութ ու մուայլ մի աշխարհ...:



16381

Գիւն է 10 սոտ.

3

10

2013

